ԱՆԿԱԽ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ
Ուրբաթ, 03 մարտի 2023

1996-ի խայտառակ ընտրություններից հետո Երեւան զորք մտցնելը, երկրի թալանը, քաղաքական սպանությունները Լեւոն-Տեր Պետրոսյանի նախագահության ժամանակից են սկսվել:

19:21 | 08 մարտի, 2021 Անկախ

ՀԻՆ ԽԱՂԻ ՆՈՐ ՊԱՐՏԻԱՆ

Ակոսի ծռությունը մեծ եզից է, ընտրություններ կեղծելը, 1996-ի խայտառակ ընտրություններից հետո Երեւան զորք մտցնելը, երկրի թալանը, քաղաքական սպանությունները Լեւոն-Տեր Պետրոսյանի նախագահության ժամանակից են սկսվել: Նա էր 2008թ. մարտի 1-ին Նիկոլ Փաշինյանին փողոցային մարտերի հրամանատար նշանակել, նա այն ժամանակ չէր մտածում Հայաստանի եւ Արցախի ներքին կայունության մասին: Նա կորոնավիրուսի համավարակի ժամանակ կոչ էր արել չքննադատել Նիկոլ Փաշինյանին, այն դեպքում, երբ վերջինս համավարակի ժամանակ սահմանադրական հանրաքվեի քարոզարշավի հանրավաքներ էր անում, վարակը տարածվում էր: Արցախում պատերազմի ժամանակ ԼՏՊ-ն լավատեղյակ էր ռազմաճակատում տիրող վատթար վիճակին, սակայն լռեց: Հիմա Լեւոն Պեր-Պետրոսյանը չի լռել, հայտարարությանբ հանդես է եկել, որտեղ <<իրեն լիովին հասկանալի է համարել զինվորականության բարձրագույն հրամկազմի վրդովմունքը և բանակի դիրքորոշումը՝ միջամտելու իր իրավասություններից դուրս գտնվող քաղաքական գործընթացներին,

ինչի պատճառը ոչ այլ ինչն էր, եթե ոչ վարչապետի անզգույշ փորձը՝ իր կրած նվաստացուցիչ պարտության մեղքը բանակի վրա բարդելու>>: Ասել է՝ բանակի հրամկազմը միջամտում է իր իրավասությունից դուրս գտնվող քաղաքական գործընթացներին,իսկ պատերազմում պարտության մեղքը բանակի վրա Նիկոլ Փաշինյանի կողմից բարդելը մեղմորեն համարել է << վարչապետի անզգույշ փորձ>>: Լեւոն Տեր- Պետրոսյանը ներկա ծանր դժվար վիճակից ելքեր չի առաջարկել, սակայն զգուշացրել է ռազմական հեղաշրջման վատ հետեւանքներից:

ԼՏՊ-ի այս հայտարարությունը կամ կատարվել է դրսի ուժերի նախաձեռնությամբ, կամ՝ նա <<որպես խաղաղության կուսակցության>> երկարամյա ղեկավար, այդ մեսիջով իր ծառայություններն է առաջարկում նույն ուժերին, միաժամանակ իրեն ապահովագրելով , որ հետագա վատ իրադարձությունների դեպքում նորից հայտարարի՝ տեսա՞ք, ես ձեզ զգուշացնում էի: Նա, ինչպես միշտ, իր շահի մասին է հոգացել, սակայն հրապարակավ ներկայացրել որպես հայրենիքի համար հոգածություն:

f

Voskan Sargsyan
about 2 years ago

ՀԻՆ ԽԱՂԻ ՆՈՐ ՊԱՐՏԻԱՆ

Ակոսի ծռությունը մեծ եզից է, ընտրություններ կեղծելը, 1996-ի խայտառակ ընտրությունների Երեւան զորք մտցնելը, երկրի թալանը, քաղաքական սպանությունները Լեւոն-Տեր Պետրոսյան նախագահության ժամանակից են սկսվել: Նա էր 2008թ. մարտի 1-ին Նիկոլ Փաշինյանին փոր մարտերի հրամանատար նշանակել, նա այն ժամանակ չէր մտածում Հայաստանի եւ Արցախի կայունության մասին: Նա կորոնավիրուսի համավարակի ժամանակ կոչ էր արել չքննադատել Փաշինյանին, այն դեպքում,... See more

75 **24** **101**

Ոսկան Սարգսյան ▸ ՖԲ Գրառում ▸ լևոն տեր պետրոսյան ▸ Նիկոլ Փաշինյան ▸ խմբագրի ընտրանի ▸

Կարդացեք նաև

f

ՔՊ-ական նախկին պատգամավոր Արթուր Դավթյանը՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ

Քրեակատարողական ծառայության և Հակակոռուպցիոն կոմիտեի համատեղ գործողությունների արդյունքում բացահայտվել է քրեակատարողական ծառայողի